«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կամակերպության 2025-2030թթ. Զարգացման ծրագիր

Տնօրենի հավակնորդ՝

Սերինե Գյուլումյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար:
Նելսոն Մանդելա

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած,հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1. մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
2. մարդկային արժանապատվության պահպանմանը
3. իր ընդունակությունների, կարողություններին և առողջությանը համապատասխան հարմարեցմանը
4. ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
5. մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
6. ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը
7. որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Որակյալ կրթություն ստանալու համար այսօր անհրաժեշտ է կրթական միջավայրի ճիշտ ձևավորում: ՏՀՏ-ի ներդրման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ են պայմաններ: Սովորողի ինքնահաստատման համար անհրաժեշտ կոմպետենցիաները կարելի է ձեռք բերել բարենպաստ կրթական միջավայրում:

Դպրոցը կազմակերպում է կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանն ու դրա օժանդակմանը: Կրթությունը պետք է բացահայտի յուրաքանչյուր սովորողի ունակությունները, զարգացնի և սովորեցնի դրանք օգտագործել կյանքում:

Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են՝ սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն և աշխատանքի շուկայում կողմնորոշվել կարողանալուն նպաստելը:

Դաստիարակության համակարգը սովորողի վրա ազդեցության գործընթացի էության, սկզբունքների, մեթոդների, միջոցների և ձևերի միասնությունն է:

Կրթությունն ու դաստիարակությունը շատ վաղ տարիքից է սկսվում, սակայն կրթական քաղաքականություն իրականացնող հիմնական օղակը եղել և մնում է դպրոցը: Այսօր, առավել քան երբևէ, մեր պետությանը պետք է դպրոց, որը աճող սերնդին համակարգված գիտելիքներ կտա: Դպրոցի գործունեության հիմքում կդրվի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը, հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, ազգային մշակույթի՝ երաժշտության, արվեստի ու ժողովրդական արհեստների, հայ առաքելական եկեղեցու դերի ու պատմության խոր և հիմնավոր ուսումնասիրումը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Դպրոցի լրիվ անվանումը՝ «**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն**

Դպրոցի հասցեն՝ **ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Աղբերք, 3-րդ փողոց, շենք 15**

Դպրոցի ՀՎՀՀ՝ **08102278**

Դպրոցի գրանցման համարը, ամսաթիվը՝ **74.210.00273, 06.12.2002թ.**

Դպրոցի հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն՝ **098032309, aghberq@schools.am**

Դպրոցի ինտերնետային կայքի հասցեն՝ https://aghberq.schoolsite.am/

Հանրակրթական ծրագրեր՝ **տարրական, հիմնական, միջնակարգ**

Ենթակայությունը՝ **մարզային**

Դպրոցն իրավունք ունի իրականացնել կրթական ծրագրեր ըստ տրված լիցենզիաների՝

տարրական հանրակրթական՝ 1 աստիճան (17 սահմանային տեղ),

հիմնական հանրակրթական՝ 2-րդ աստիճան (25 սահմանային տեղ),

միջնակարգ հանրակարթական՝ 3-րդաստիճան (20 սահմանային տեղ):

Տարածքային կառավարման լիազորված մարմին՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:**

Աշխատանքային ռեժիմը՝ **միահերթ**:

Աշխատանքային շաբաթը՝ **հնգօրյա**:

Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի 23 աշխատակից, որոնցից 17-ը ուսուցիչ՝ բարձրագույն կրթությամբ և մասնագիտական համապատասխան որակավորմամբ: Դպրոցի մանկավարժական անձնակազմը համալրվել է հարակից բնակավայրերից երթևեկող ուսուցիչներով:
Դպրոցում «Ռուսաց լեզու», «Ֆիզիկա» և «Ինֆորմատիկա» առարկաների ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ է հայտարարվում:Նշված առարկաները դասավանդվում են ժամանակավոր աշխատող ուսուցիչների օգնությամբ:

Աշակերտական կազմ և դասարաններ

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
1-ին դասարան	3	5	5	3
2-րդ դասարան	5	4	5	5
3-րդ դասարան	3	4	4	5

4-րդ դասարան	1	4	3	4
5-րդ դասարան	5	1	4	3
6-րդ դասարան	3	5	1	3
7-րդ դասարան	4	3	4	1
8-րդ դասարան	2	4	3	4
9-րդ դասարան	4	3	4	3
10-րդ դասարան	4	5	2	4
11-րդ դասարան	5	3	4	2
12-րդ դասարան	3	6	3	4
Ընդամենը	**42**	**47**	**42**	**41**

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
1-ին դասարան	0,5	0,5	0,5	1
2-րդ դասարան	0,5	0,5	0,5	1
3-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
4-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
5-րդ դասարան	0,5	0,5	0,5	1
6-րդ դասարան	0,5	0,5	0,5	1
7-րդ դասարան	0,5	0,5	0,5	1
8-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
9-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
10-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
11-րդ դասարան	0,5	0,5	0,5	0,5
12-րդ դասարան	0,5	0,5	0,5	1
Ընդամենը	**6**	**6**	**6**	**9**

2023-2024 ուսումնական տարում դպրոցում սովորում է 41 աշակերտ: Ունենք գերազանց առաջադիմությամբ սովորող 5 աշակերտ: ԿԱՊԿՈՒ 1 աշակերտուհի ունենք, ով ունի հենաշարժողական ֆունկցիայի խանգարում: Աջակցություն է ստանում Գեղարքունիքի ՏՄԱԿ-ի կողմից:

Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծություն

Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքներով է պայմանավորված դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, դպրոցում առողջ և բարյացակամ մթնոլորտի ստեղծումը, աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների համախմբվածությունը, ծնողների ներգրավվածությունը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Կատարելով վերջին մի քանի տարիների ուսումնադաստիրարակչական աշխատանքների վերլուծությունը, մենք կկարողանանք վերհանել դպրոցի գործունեության արդյունքների թերացումները՝ դրանք շտկելու նպատակով:

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2023-2024 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը			Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը			4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը		
	IV	IX	XII	IV	IX	XII	IV	IX	XII
Հայոց լեզու /Մայրենի/	4	3	4	7	7	6	8	15	15
Հայ գրակ.		3	4		7	6		16	
Մաթեմատիկա	4	3	4	7			8	16	10
Հանրահաշիվ		3	4		7	5			
Երկրաչափություն		3	4		7	5			
Ռ. լեզու	4	3	4	6	7	6		13	
Անգլերեն	4	3	4	6	7	5			
Երաժշտություն	4			8					
Կերպարվեստ	4			8					
Ես և շրջակա	4			6					
Տեխնոլոգիա	4			8					
Շախմատ	4			9					

Ֆիզկուլտուրա	4	3	4	9	9	9		9	ստուգվա ծ
Հայ. աշխ., աշխ.		3	4		7	6		14	
Հ. պատմ		3	4		7	6		16	10
Համ. պատմ		3	4		8	6			
ՀԵՊ		3	4		8				
Հասարակ.		3	4		8	6			
Ինֆորմ		3	4		7	7			
Ֆիզիկա		3	4		7	6			
Քիմիա		3	4		7	5			
Կենսաբ		3	4		7	6			
ՆԶՊ		3	4		8				
Ընդամենը									

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը/դասարան			Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը			4-րդ դասարանի գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանի պետական ավարտական քննությունների միավորների միջինը		
	IV/3	IX/4	XII/3	IV	IX	XII	IV	IX	XII
Մայրենի				7,3			7		
Մաթեմատիկա				7,3			7	8	
Ռուսացլեզու				7	6	6		11	
Անգլերեն				6,3	5	5			
Հայոցլեզու					5	4		10	
Գրականություն					5	5		11	
Աշխարհագրություն					5	5		9	
Հայոցպատմություն					6	6		9	
Համաշխարհային պատմություն					7	6			

Հասարակագիտություն					7	6			
ՆԶՊ					6	6			
Ինֆորմատիկա					5	5			
ՀԵՊ					7				
Հանրահաշիվ					4	4			
Երկրաչափություն					4	4			
Քիմիա					5	5			
Ֆիզիկա					6	6			
Կենսաբանություն					5	5			
Ֆիզկուլտուրա					9	8		8	
Երաժշտություն				7,7					
Կերպարվեստ				7,7					
Շախմատ				6					
Ես և շրջակա աշխահը				7					
Տեխնոլոգիա				8					

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2021-2022 ուստարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը			Պետականպարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը			4-րդ դասարանի գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանի պետական ավարտական քննությունների միավորների միջինը		
	IV/4	IX/3	XII/6	IV	IX	XII	IV	IX	
Մայրենի				9			9		
Մաթեմատիկա				8			9	8	
Ռուսացլեզու				8	7	7		6	
Անգլերեն				7	5	5			
Հայոցլեզու					5	6			
Գրականություն					5	6		6	
Աշխարհագրություն					6	6		12	
Հայոց պատմություն					5	5		6	

Համաշխարհային պատմություն					5	5			
Հասարակագիտություն					5	6			
ՆԶՊ					6	6			
Ինֆորմատիկա					6	6			
ՀԵՊ					6				
Հանրահաշիվ					4	5			
Երկրաչափություն					4	5			
Քիմիա					5	5			
Ֆիզիկա					6	6			
Կենսաբանություն					5	5			
Ֆիզկուլտուրա				9	8	9		9	
Երաժշտություն				9					
Կերպարվեստ				9					
Շախմատ				8					
Ես և շրջակա աշխահը				8					
Տեխնոլոգիա				9					

Ցուցանիշ	2021-2022			2022-2023			2023-2024		
	I	II	III	I	II	III	I	II	III
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	4	2	1	2	3	0	1	2	0
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	13/17	1/16	0/13	2/17	3/17	0/11	2/17	3/17	0/11
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների	1	1	1	1	1	1	1	1	1
Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ			0			0			0

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ 3-րդ, 4-րդ, 8-րդ և 9-րդ,10-րդ,11-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու», «Հանրահաշիվ, երկրաչափություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Կազմվել է համապատասխան հաշվետվություն/վերլուծություն:Նշված դասարանների ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ 4-րդ և 9-րդ դասարանները

քննական դասարաններ են, իսկ 3-րդ և 8-րդ դասարանները՝ նախաքննական, ինչը թույլ կտար ուսուցչին ժամանակին ներմուծել շերտավոր ուսուցում և սովորողներին նախապատրաստել գիտելիքի ստուգմանն ու քննություններին:2.4-րդ դասարանի գիտելիքի ստուգում– անցկացվել է գիտելիքների ստուգում 4-րդ դասարանում ընդգրկված սովորողների համար «Մայրենի», «Մաթեմատիկա»4-րդ դասարանում անբավարար գնահատականներ չկան:

9-րդ դասարանի ավարտական քննություններ – անցկացվել են ավարտական քննություններ 9-րդ դասարանի սովորողների համար «Հայոց լեզու», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Բնագիտություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու», «Ֆիզկուլտուրա»: 9-րդ դասարանում՝ 3 աշակերտներն էլ ստացել են դրական գնահատականներ:

12-րդ դասարանի ավարտական քննություններ – անցկացվել են ավարտական քննություններ 12-րդ դասարանի սովորողների համար «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա»:12-րդ դասարանում՝4 աշակերտներն էլ ստացել են դրական գնահատականներ:

2023-2024 ուստարվա ընթացքում բուռն կերպով իրականացվել է ներդպրոցական վերահսկողություն՝ կրթության որակի վերաբերյալ օբյեկտիվ պատկեր ունենալու, այն բարձրացնելու, սովորողների մոտ արժեքներ և դիրքորոշում ձևակերպելու, ինչպես նաև ուսուցիչների մոտ որոշ կարծրատիպեր կոտրելու նպատակով:

Ձևավորվել է բարոյահոգեբանական բարձր մթնոլորտ թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների մոտ:

Սովորողներն ու ծնողները շատ հաճախ ցուցաբերում են ցածր իրավագիտակցություն:

Ուսուցիչների մոտ ձևավորված կարծրատիպեր և նոր մոտեցմամբ աշխատելու նկատմամբ վախ:

2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ներմուծված հանրակրթական պետական նոր չափորոշչով պայմանավորված, հաստատությունում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագծային աշխատանք՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից:Այս ուսումնական տարում նախագծային աշխատանք իրականացվեց 7-րդ դասրանի միակ աշակերտի հետ «Սևանա լճի հիմնախնդիրները» թեմայով:

2023-2024 ուստարում գործում է նաև «Առողջ ապրելակերպ »խմբակը, որին մասնակցում են դպրոցի 5-րդ և 7-րդ դասարանի աշակերտները:

Այս աշխատանքները երեխաների մոտ զարգացնում են վերլուծական մտածողություն:

Բռնության և թմրամիջոցների դեմ պայքարին ուղղված համատեղ միջոցառումներ են իրականացվում ոստիկանության անչափահասների տեսչության հետ :

Աշակերտները մասնակել են տարածքային և մարզային օլիմպիադաներին, սակայն էական հաջողություն չեն ունեցել:

Վերջին տարիներին մեծ է մասնակցությունը տարաբնույթ ուսումնական նախագծերին և համայնքային մրցույթ-փառատոններին, որտեղ զբաղեցնում են նաև մրցանակային տեղեր:

Դպրոցի դասարանները փոքրաթիվ են: Այդ պատճառով միջոցառումները հիմնականում համադպրոցական բնույթ են կրում, որոնց մասին ներկայացված է խորհրդակցական մարմինների հետ աշխատանքի բաժնում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մանկավարժները տիրապետում են իրենց աշխատանքային պարտականություններին և հետևողական են	Օլիմպիադաներին ցուցաբերած արդյունքները բավարար չեն
Բարձրացել է մրցույթների նկատմամբ հետաքրքրությունն ու մասնակցությունը	ԲՈՒՀ –ում կրթությունը շարունակել ցանկացողների տոկոսը շատ ցածր է
Երկտարեց սովորողներ դպրոցում չկան	Սոցիալապես անապահով երեխաները հաճախ են բացակայում դասերից
Սովորողները պահպանում են վարքագծի կանոնները	Կան ծնողներ ու սովորողներ,ովքեր անտարբեր են ուսման հանդեպ
Սովորողները արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում	Ցածր է ընթերցանության մակարդակը
	Առաջադիմության ցածր մակարդակ
	Սովորողների արտահոսքը այլ դպրոցներ
	Ուսման նկատմամբ հետաքրքրությունը տարրական դասարաններում կտրուկ անկում է ապրում միջին դասարաններում:
	Նպատակասլացության, պատասխանատվության, ակադեմիական ազնվության ցածր մակարդակ
	Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս, հատկապես տղաների մոտ, քանի որ գուցե չեն կարևորում կրթության դերը մարդու կյանքում
	Աշակերտների ոչ օբյեկտիվ ինքնագնահատում, սեփական գործունեության կամ անգործունեության հետևանքների պատասխանատվությունից խուսափելու միտում

Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծությունը

Անհատի կրթությունն ու դաստիարակությունը շատ վաղ տարիքից է սկսվում: Իսկ կրթական քաղաքականություն իրականացնող հիմնական օղակը եղել և մնում է դպրոցը: Այսօրվա դպրոցը պետք է համապատասխանի ժամանակի թելադրանքին ու պահանջներին: Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում պիտի լինի ուսուցիչը, որպես փոփոխությունների անմիջական կրող և իրականացնող: Հետևաբար, կարևոր է ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացումը, դասավանդման մեջ նոր մոտեցումների մշակումը, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Դպրոցի մանկավարժական համակազմը բաղկացած է 17 ուսուցչից, տնօրենից, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետից, զինղեկից, լաբորանտից, գրադարանավարից: Ոչ բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն: Մասնակցում են վերապատրաստման դասընթացներին: ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված ՀՊՁ վերապատրաստումներին մասնակցել են այն ուսուցիչները, որոնք դասավանդում են նոր չափորոշիչներով: MS-Teams հարթակում ուսուցիչների մի մասը ընդգրկված է ԿԶՆԱԿ-ի կողմից ստեղծված խմբերում՝ տարաբնույթ հուզող հարցեր քննարկելու և պատասխաններ ստանալու նպատակով:

Տնօրենն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, արդյունավետ կազմակերպում է դպրոցի աշխատանքները, պարբերաբար մասնակցում է վերապատրաստումների դասընթացների, աջակցում է մանկավարժներին նորարարությունների ուսուցման, դասի ընթացքում կիրառությանը:

Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետն ունի բարձրագույն կրթություն, ՏՀՏ ոլորտում տարբեր սեմինարների, դասընթացների մասնակցության սերտիֆիկատներ, լիարժեք աջակցում է մանկավարժներին ՏՀՏ աշխատանքներում:

Դպրոցի գրադարանավարը չի անցել վերապատրաստումներ գրադարանավարության ծրագրով, գրադարանավարությունը չի իրականացնում համակարգչով, կարիք ունի վերապատրաստումների:

Չնայած դպրոցը չունի ժամանակակից լաբորատորիաներ, այնուամենայնիվ ունի լաբորանտ, որը սակայն կարիք ունի ժամանակակից լաբորատորիաների հետ աշխատանքի կարողությունների զարգացման:

Զինղեկն ունի սպայական կոչում, բարձրագույն կրթություն, կարիք ունի ՏՀՏ միջոցներով աշխատանքներ իրականացնելու կարողությունների զարգացման:

Դպրոցում առայժմ չկան կամավոր ատեստավորմանը մասնակցած, ինչպես նաև տարակարգ ունեցող ուսուցիչներ:

Ժամանակի թելադրանքով դպրոցի անձնակազմը պետք է տիրապետի համակարգչային նվազագույն գիտելիքների, ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Ուսուցիչների մի մասը ՏՀՏ գործիքակազմին

ծանոթացել է վերապատրաստման դասընթացների ժամանակ: Սակայն դպրոցի ոչ լիարժեք կահավորվածությունը և շենքային պայմանները թույլ չեն տալիս դրանցով հաճախակի աշխատել: Ուսուցիչները միմյանց այդ հարցում օգնում են, որքան հնարավոր է:

Փոխադարձ քննարկումների արդյունքում ապահովվում է ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացումը:

Ուսուցման գործընթացում փորձառու ուսուցիչները կիրառում են դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ: Փորձառու ուսուցիչները սկսնակներին մեթոդմիավորման շրջանակներում տալիս են խորհրդատվություն, օգնում են կայանալ և արդյունավետ աշխատել:

2023-2024 ուսումնական տարում մանկավարժական համակազմի հետ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն է ցույց տրվել ուսուցիչներին,կարևորվել է համագործակցային մեթոդների կիրառումը:
- ✓ Վերահսկվել է հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գործընթացը:
- ✓ Վերահսկվել է էլեկտրոնային դասամատյանների ՝ matyan.emis.am վարման կարգը:
- ✓ Ստուգվել է ծրագրային նյութերի կատարողականը:
- ✓ Վերահսկվել է matjan.emis.am էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումները:
- ✓ Վերահսկվել է ուսուցիչների աշխատանքը, օրվա պլանների առկայությունը:
- ✓ Կազմակերպվել և անց են կացվել ուսուցչական զեկուցումներ՝ ծրագրային որևէբարդ թեմայի մշակման և դասավանդման վերաբերյալ:
- ✓ Ուսուցիչներին պարբերաբար ծանոթացվել է մանկավարժության բնագավառում նորագույն նվաճումներին, կրության վերաբերյալ որոշումներին,հրահանգներին և նորմատիվ փաստաթղթերին:
- ✓ Վերահսկվել է պատկան մարմնի հանձնարարականների կատարումը:
- ✓ Անցկացվել են ներդպրոցական առարկայական օլիմպիադաներ բոլորառարկաներից:
- ✓ Սկսնակ ուսուցիչների դասաժամերն անընդհատ պահվել է վերահսկողության տակ:Ցույց է տրվել մեթոդական օգնություն :
- ✓ Կատարվել է թեմատիկ և գործնական գրավոր աշխատանքների որակի և առաջադիմության ստուգում:
- ✓ Ստուգվել է առարկաների կատարողականը, տրվել են համապատասխան հրահանգներ:
- ✓ Դպրոցի տնօրենը և ուսուցչական համակազմը մասնակցել է 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների ՀՊՉ և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների և ուսուցիչների վերապատրաստումներին:

2023-2024 ուսումնական տարում ուսման որակի վերահսկմաննպատակով կատարվել են բազմաթիվ դասալսումներ բոլոր մեթոդական միավորումներում: Հաստատված ժամանակացույցով յուրաքանչյուր միավորման հատկացվել է 2 շաբաթ: Դասալսումները

հետապնդել են բազմաթիվ նպատակներ՝ ըստ յուրաքանչյուր առարկայի յուրահատկության: Յուրաքանչյուր դաս քննարկվել է ուսուցչի հետ, վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը: Դալասման ժամանակ ուշադրություն է դարձվել ընթացքի, նպատակի, վերջնարդյունքի, սովորողների վարքագծի, մասնակցության աստիճանի, սովորող-սովորող կապի, շերտավոր ուսուցման և խմաբային աշխատանքների վրա: Գրեթե բոլոր ուսուցիչներին տրվել է հանձնարարական դասը պլանավորել և իրականացնել՝ հաշվի առնելով վերընշված կետերը: Ստուգվել է նաև օրվա դասի պլանի առկայությունը, ինչը երբեմն բացակայել է: Եղել են հաջողված, ավանդական մեթոդներով, ժամանակակից մեթոդներով և, իհարկե, ձախողված դասեր: Բազմիցս արվել են համապատասխանդիտարկումներ, տրվել են առաջարկություններ և հանձնարարականներ: Դասալսումներ կատարվել են ոչ միայն տնօրենության, այլև մեթոդական միավորումների նախագահների և անդամ-ուսուցիչների կողմից: Դասալսումները կրել են կառուցողական բնույթ, որոնց նպատակն է եղել իրականացնել փորձի փոխանակում, աջակցել միմյանց և ակնհայտ դարձնել հաջողված կիրառությունները, իսկ սկսնակ ուսուցիչների մոտ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով: Ակտիվ դասալսումներ են իրականացվել նաև պարտադիր ատեստավորված ուսուցիչների մոտ ստուգելու՝ արդյոք տիրապետում են նոր մեթոդներին, ՏՀՏ գործիքների կիրառությանը:

Դասավանդող 5 ուսուցիչներ չունեն բարձրագույն մանկավարժական կրթություն, սակայն աշխատանքային բավարար ստաժով պայմանավորված շարունակում են դասավանդել դպրոցում: Նախորդ տարի միջին մասնկագիտական կրթությամբ երկու մանկավարժներ կամավոր ատեստավորմանը չմասնակցելու արդյունքում ազատվել են աշխատանքից:

№	Չափանիշ	2023-2024 ուստարի	2022-2023 ուստարի	2021-2022 ուստարի
ա.	Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը:	***12*** 60%	7 44%	7 44%
բ.	Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների տոկոսը:	100%	100%	100%
գ.	Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը:	***0***	0	***0***
դ.	Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը:			
ե.	Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը:		***20***	***20***

գ.	Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը:	***1***	***0***	***0***
է.	Ուսուցիչների միջին տարիքը:	***47***	48,84	50
ը.	Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը:			
թ.	Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը՝ տոկոսային արտահայտությամբ:			
ժ.	Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ կիրառող ուսուցիչների թիվը:	***6***	***3***	***3***
ժա.	Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը:	***10***	***5***	***3***
ժբ.	Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը:	***50***	***40***	***30***

Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը

Ուսուցիչների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Մինչև 30 տարեկան	1	1	1
31-40 տարեկան	3	3	7
41-50 տարեկան			1
51-55 տարեկան	1		0
56 տարեկան և ավելի	7	9	8

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	13	11	13	17
Ուսուցիչների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը	15	19	17	17

№	Չափանիշ	2023-2024 ուստարի
ա.	Անհատական ուսումնական պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը:	***Այո***
բ.	Այն ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:	***Գրեթե բոլորը***
գ.	Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր:	***Այո***
դ.	Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից:	***Այո***
ե.	Ուսուցիչները կարողանում են կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում:	***Գրեթե միշտ***

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ
Բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն, մասնակցում են վերապատրաստման դասընթացներին	Տարիքով ուսուցիչները դժվարանում են ՏՀՏ-ների կիրառել, կարիք ունեն վերապատրաստումների
Իրենց աշխատանքի մեջ ուսուցիչների մեծ մասը պարտաճանաչ է և պատասխանատու	Դպրոցում չկան տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչներ

Աշխատում են դասի օրվա պլանների առկայությամբ	Կան ուսուցիչներ, ովքեր ունեն նոր չափորոշիչների կիրառման վերաբերյալ դասընթացի անհրաժեշտություն, կարիք ունեն վերապատրաստումների
Ձևավորված է փոխօգնության և համագործակցային միջավայր	Դպրոցի գրադարանավարը չի տրապետում գրադարանավարության ծրագրին, կարիք ունի վերապատրաստումներ
2023-2024 ուստարում դպրոցը համալրվեց երիտասարդ մանկավարժներով	Դասի պլանների ստուգման ընթացքում ի հայտ են եկել որոշակի թերություններ, կարիք կա մանկավարժների համար կազմակերպել լրացուցիչ դասընթացներ
	Գրադարանավարը կարիք ունի գրադարանավարության ծրագրի ուսուցման
	Լաբորանտը կարիք ունի ժամանակակից լաբորատորիաների հետ աշխատանքի կարողությունների զարգացման
	Ձինղեկը կարիք ունի ՏՀՏ միջոցներով աշխատանքներ իրականացնելու հմտությունների զարգացման

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ուսումնական հաստատությունը մշտապես համագործակցում համայնքի, կրթության կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ: Դա նպաստում է հասարակություն-դպրոց կապի խորացմանը:

Սովորողները տեղեկացված են համայնքային խնդիրներին, մասնակցում են համայնքի կողմից նախաձեռնած շաբաթօրյակներին, ծառատունկերին, կարևորում են համայնքում էկոլոգիական վիճակի պահպանումը:

Համայնքի բնակչության համար միջոցառումներ քիչ են կազմակերպում, այս ուղղությամբ կարող են տարվել աշխատանքներ հետագայում դրանց ավելացման նպատակով:

Համայնքը սոցիալական ծրագրեր է իրականացնում անապահով ընտանիքների երեխաներին աջակցելու համար, տարամադրում է դասագրքի արժեքների որոշակի փոխհատուցումներ:

Համայնքի հետ համատեղ ծրագրեր չեն իրականացվում, համայնքի կողմից դպրոցի շենքային պայմանների բարելավման ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

Համայնքի ղեկավարությունը տարին մի քանի անգամ մասնակցում է դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

Նկարագրել, թե հաստատության ինչպիսի ծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները	Հաճախականությունը՝ ամսական կամ տարեկան կտրվածքով	Օգտվող բնակիչների թիվը	Մեկնաբանություն
մարզադահլիճից	Ամսական 1- 2 անգամ	10-12	
գրադարանից	Ամսական 2-3 անգամ	10-12	
քսերոքս	Ամսական 1- 2 անգամ	20	

Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
1.Շաբաթօրյակ, համայնքի տարածքում գտնվող հուշարձանին կից տարածքի բարեկարգում	1/05	100%	

Դպրոցը որպես համայնքային կենտրոն զարգացնելու հեռանկարները

Դպրոցը որպես համայնքային կենտրոն զարգացնելու համար հեռանկարները շատ թույլ են, դպրոցը չունի շենքային պայմաններ, բացօթյա բարեկարգ տարածքներ, որոնք կարող են օգտագործվել նաև համայնքի բնակչության կարիքների բավարարման նպատակով: Դպրոցը կարող է աջակցություններ ցուցաբերել համայնքի բնակչությանը մասնագիտական դաշտում, օգտագործել առկա գիտելիքները համայնքային խնդիրների լուծման ճանապարհին: Համայնքի բնակչության համար կազմակերպել սեմինարներ, աջակցել տարբեր ծրագրերին մասնակցելու համար համակարգչային գրագիտության բարձրացմանը: Այս համատեքստում անհրաժեշտ է իրականացնել՝

1. Դպրոցի մասնագիտական ներուժի համախմբում համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման համար,
2. Համայնքի հետ համագործակցել դպրոցի շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:
3. Դպրոցում ստեղծել երկարօրյա ուսուցման կազմակերպման հնարավորություններ, դպրոցը դարձնել համայնքային երկարօրյա ուսուցման կենտրոն:
4. Համայնքի հետ համատեղ գնահատել բնակչության կարիքները, մշակել դրանց լուծման գործընթացում դպրոցի մասնակցության մեխանիզմներ, հետևողական լինել սահմանված պարտավորությունների իրականացմանը:

Դպրոցն ունի ակտիվ ծնողական համայնք, ովքեր ներգրավված են արտադպրոցական, արտադասարանական ուսուցման կազմակերպման աշխատանքներում: Դպրոցում շենքային պայմանների բացակայությամբ պայմանավորված սպորտային խմբակներ չեն գործում, սակայն զգացվում է դրանց անհրաժեշտությունը: Ծնողների նախաձեռնությամբ հիմնականում կազմակերպվում են այցեր տարբեր պատմամշակութային վայրեր, թատրոններ, թանգարաններ, իրականացվում են ճանաչողական այլ այցեր:

Ցուցանիշ	**2021-2022 ուստարի**	**2022-2023 ուստարի**	**2023-2024 ուստարի**
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.			
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	**4**	**4**	**3**
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ			

կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը			
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում	5	4	4
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների թիվը տվյալ ուստարում	*5*	*6*	*6*
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	45%	54%	58%
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության	90%	90%	90%

Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ՝ առաջնորդվելով նրանց կողմից ընդունված հրամաններով, կարգերով: Առկա է մշտական կապ մաչզպետի աշխատակազմի հետ՝ որպես դպրոցի կառավարման լիազոր մարմին:

Դպրոցը համագործակցում է նաև մի շարք այլ շահառու կազմակերպությունների հետ՝ ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ՏՄԱԿ, որոնց կազմակերպած վերապատրաստումներին մասնակցում են դպրոցի մանկավարժները, այդ կազմակերպությունների հնարավորություններն ու ռեսուրսներն օգտագործվում են դպրոցի կարիքների բավարարման նպատակով:

Կտակի հետ համագործակցությամբ ապահովում է էլեկտրոնային հարթակների, տեղեկատվական համակարգերի շահագործումը:

Կզնակ-ի հետ համագործակցությամբ բորոլոր ուսուցիչներն իրազեկվում են կրթության կազմակերպման նոր մեթոդներին, ձևերին, անցել են ՀՊՁ-երի վերապատրաստումներ:

ՏՄԱԿ-ն աջակցում է սովորողների ներառական ուսուցման ակզմակերպմանը, ներառական կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով մանկավարժների փորձի փոխանցումը:

Համագործակցող կազմակերպությունների շրջանակը մեծ չէ, նրանց հետ համագործակցությամբ ապահովվում է դպրոցի և սովորողների առաջնահերթ կարիքների բավարարումը:

Բացակայում է համագործակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների հետ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցը համագործակցում է Ճամբարակ համայնքի և Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ	Չկան անհատ բարերարներ, որոնք կնպաստեն հարմարավետ միջավայրի ստեղծմանը
Համայնքում կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան	Տարբեր ՀԿ-ների և կառույցների հետ համագործակցության պասիվություն
Համայնքը մասնակցում է անապահով ընտանիքներին աջակցության սոցիալական ծրագրերի իրականացմանը	Դպրոցը որպես համայնքային կենտրոն կայացնելու համար վատթար շենքային պայմանների առկայություն
Դպրոցը սիրով և ակտիվ մասնակցում է կազմակերպվող միջոցառումներին և շաբաթօրյակներին, ծառատունկին, փառատոններին	Ծնողական համայնքի իրազեկվածությունը սովորողների ուսումնառության արդյունքներին կարիք ունի բարելավման
Դպրոցը համագործակցում է փրկարար ծառայության, ՊՆ-ի, ԿՋՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ՀՀ Ոստիկանության տարածքային բաժնի և այլ շահառու կազմակերպությունների հետ	
Դպրոցը համագործակցում է Ճամբարակ համայնքում գործող Գեղարվեստի և երաժշտական դպրոցների հետ	
Դպրոցն ունի ակտիվ ծնողական համայնք, ովքեր ներգրավված են արտադպրոցական ուսուցման կազմակերպման աշխատանքներում	

Խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը, բազմակարծիք, մասնակցային ներառական միջավայրի վերլուծությունը

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է համընդհանուր ներառական ուսուցում կազմված ԱՈՒՊ-ներին համապատասխան: Թիմը աշխատել է նախապես կազմված դասացուցակին համապատասխան՝ անհատական աշխատանքներ իրականացնելով սովորողների հետ: Դասապրոցեսի ընթացքում եղել է աջակցություն ԿԱՊԿ ունեցող սովորողին, նախապես գրված պլանին համապատասխան: Աջակցությունը եղել է կարիքից ելնելով և համագործակցելով ծնողի հետ, լսելով նրանց մտահոգությունները և առաջարկությունները: Ուստարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ դասավանդող ուսուցիչների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ծնողների հետ՝ նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան և կազմվել արձանագրություններ: Ուսումնական տարվա սկզբին եղել է թվով 1 սովորող, տարվա ավարտին՝ 1:

ԲՄԹ խմբի անդամները նաև ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքի գնահատման, նրանց համար անհրաժեշտ ուսումնական նյութերի պատրաստման գործում, դասավանդող ուսուցիչների հետ քննարկել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության հետ կապված խնդիրները:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել է սեմինար, որի նպատակն էր ուսուցիչներին ծանոթացնել ԱՈՒՊ-ների վարման նոր կարգին: Իրականացվել է նաև ամենամսյա հանդիպումներ ՏՄԱԿ-ից գործուղված մասնագետների հետ փորձի փոխանակման և մասնագիտական քննարկումների նպատակով: Յուրաքանչյուր ամիս հանդիպում է կազմակերպվել նաև ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների և տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի մասնակցությամբ:

Սոցիալական մանկավարժը կազմակերպել է զրույց-քննարկումներ սովորողների հետ «Ընկերասիրություն» և «Հիգիենայի կանոններ» թեմայով: Ուսումնական ընթացքում նաև կատարվել են դասալսումներ, որոնց նպատակն է եղել պարզել սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը:

Դասղեկների օգնությամբ առանձնացվել են սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքի երեխա հանդիսացող սովորողները: Մանկավարժական խորհրդի համաձայնությամբ դպրոցի դասագրքերի ֆոնդից վերջիններիս դասագրքեր տրամադրվել են անվճար հիմքով համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում:Միաժամանակ, հաշվառվել են նաև անցանկալի վարք ցուցաբերող և դժվար դաստիարակվողսովորողները, որոնց հետ տարվել են անհատական զրույցներ երբեմն նաև անչափահասների գծով տեսուչի ներգրավմամբ:

№	Չափանիշ	2023-2024 ուստարի
ա.	Ուսումնական հաստատությունում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու համար:	***Այո՝*** *8-րդ և 9-րդ 12րդ դասարաններում ֆիզկուլտուրայի դասաժամերին և «Առողջ ապրելակերպ» խմբակի շրջանակներում:* *Ինչպես նաև զրույց դասղեկի ժամին:*
բ.	Ուսումնական հաստատությունում իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:	***Նման դեպքեր չեն գրանցվել,*** *սակայն փոքր խնդիրներ առաջանալու դեպքում տեղի են ունեցել մասնավոր զրույցներ համապատասխան սովորողների և նրանց ծնողների հետ դպրոցի հոգեբանի, սոց. մանկավարժի, դասղեկի մասնակցությամբ:*
գ.	Ուսումնական հաստատությունում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ:	***Նման դեպքեր չեն գրանցվել,*** *սակայն մշտապես կազմակերպվել են կանխարգելիչ բնույթ կրող հանդիպումներ ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի հետ, հետ դպրոցի հոգեբանի, սոց. մանկավարժի, դասղեկի մասնակցությամբ:*
դ.	Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:	***Այո՝*** *կազմակերպվել են հանդիպումներ ծնողական խորհրդի և բանավեճ աշակերտական խորհրդի հետ, որտեղ քննարկվել են բուլինգը, ֆիզիկական և հոգեկան բռնությունն ու դրա հետևանքները: Կազմակերպվել է զրույց-սեմինար ոստիկանների մասնակցությամբ, պարբերաբար այցեր է կատարել դպրոցին կցված անչափահասների գծով տեսուչը և զրուցել սովոլողների ու ծնողների հետ:*
ե.	Ուսումնական հաստատությունում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:	***Այո՝*** *բանավեճեր և քննարկումներ ԱԽ նիստերում, ինչպես նաև համապատասխան քննարկումներ «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակներում:*
զ.	Ուսումնական հաստատությունն ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և	***Այո՝*** *դպրոցի ուսուցիչները պարբերաբար կազմակերպում են*

	կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:	*զրույցներ «**Բուլինգը դեռահասների միջավայրում**» թեմայով:*

«Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, խորհուրդներ:

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը:

Դպրոցը սերտորեն համագործակցում է կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:Կազմակերպության գործունեությունը բաց է և թափանցիկ:

2023-2024 ուստարվա կարևոր ձեռքբերումներից էր նաև առողջ, կառուցողական և ակտիվ համագործակցությունը ԾԽ-ի և առհասարակ ծնողական համայնքի հետ: Ծնողական ժողովներ են հրավիրվել առնվազն 4 անգամ, իսկ խնդրահարույց դասարանների հետ՝ նույնիսկ ավելի շատ: Հակասոցիալական վարք ունեցող սովորողների ծնողների հետ տարվել են անհատական հանդիպումներ և զրույց- քննարկումներ: Բոլոր ձևաչափերով կազմակերպված ժողովներին ներկա է գտնվել ողջ վարչակազմը, դասղեկը, երբեմն նաև դպրոցի՝ անչափահասների գործերով տեսուչը:

Ուսուցիչների մանկավարժական հմտություններն ու կարողությունները բարձրացնելու նպատակով անց են կացվել փոխադարձ դասալսումներ, մեթոդմիավորման նիստեր.կազմվել են արձանագրություններ:

ա/ Հայոց լեզու,գրականություն և պատմություն մ/մ՝ տեղի է ունեցել 10 մ/մ նիստ, կազմվել՝ 10 մ/մ արձանագրություն

բ/ բնագիտական մ/մ, տեղի է ունեցել 10 մ/մ նիստ, կազմվել է 10 մ/մ արձանագրություն

գ/ Տարրական դպրոց մ/մ, տեղի է ունեցել 10 մ/մ նիստ, կազմվել՝ 10 մ/մ արձանագրություն

Ցուցանիշ	**2021-2022 ուստարի**	**2022-2023 ուստարի**	**2023-2024 ուստարի**
Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցությունն են ուեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը			
Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը			
Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը	*2*	*2*	*4*

Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը			

№	Չափանիշ	2023-2024 ուստարի
ա.	Տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:	***Այո***
բ.	Սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը:	**Երկու անգամ՝ Աշակերտական խորհրդի մասնակցությամբ**
գ.	Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը:	
դ.	Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը:	***Սովորողները կազմակերպել են անակնկալ ուսուցիչների փոնի կապակցությամբ:*** ***Սովորողները կազմակերպել են նաև վերջին դասի միջոցառումը:***
ե.	Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը:	***Աշակարերտական խորհուրդը 12 սովորող***
զ.	Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր սեղանները, քննարկումները, դրանց թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը,	
է.	Սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում:	***Դպրոցում ձևավորված է առողջ և բարոյահոգեբանական ջերմ միջավայր: Բնականաբար լինում են որոշ դեպքեր, սակայն ընդհանուր առմամբ, գնահատվում է՝ «ԼԱՎ»***

№	Չափանիշ	2023-20234 ուստարի
ա.	Աշակերտական խորհրդի նախաձեռնած քայլերը՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն:	***Աշակերտական խորհուրդը ունեցել է մասնակցություն աշակերտական կարգ ու կանոնին վերաբերվող հարցերի քննարկումներին և անհրաժեշտության դեպքում՝ նաև ծնողական ժողովներին:***
բ.	Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով:	***Կազմակերպվել են ԱԽ-ի նիստեր վարքի ու պահվածքի քննաչկումներ և 2 արտահերթ նիստ:***
գ.	Աշակերտական խորհրդի նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը:	***Կինոդիտումներ, նոր դասագրքերի ստացմանը աջակցող միջոցառում: Կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.*** - ***Անկախության օրվան նվիրված միջոցառում*** - ***,,Երկրաշարժ,,ֆիլմի դիտում՝նվիրված 1988թ. ավերիչ երկրաշարժի զոհերին*** - ***Շաբաթօրյակներ*** - ***Երբ գալիս է Ամանորը***
դ.	Աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին:	***ԱԽ-ն առաջնորդվել և գործել է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներով:***

№	Չափանիշ	2023-2024 ուստարի
ա.	Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ:	***Պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ ծնողական խորհրդի հետ, որի ընթացքում հնչել են տարբեր առաջարկություններ, որոնք քննարկվել են մանկավարժական խորհրդում և ընդունվել:***
բ.	Ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ,	***Ծնողները միշտ ակտիվ մասնակցել են ուսուցիչների,***

	երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը:	***դասղեկների կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին և մեծ պատրաստակամությամբ ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպչական բնույթի աջակցություն:***
գ.	Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները, դրանց թիվը:	***Ծնողական խորհրդի և տարբեր ծնողների կողմից հնչել են բազմաթիվ գովեստի խոսքեր շատ ուսուցիչների մասին: Միաժամանակ եղել են նաև որոշ դժգոհություններ կապված մի քանի ուսուցիչների հետ: Այդ դեպքերը քննարկվել են դպրոցի էթիկայի հանձնաժողովում, ստացել համապատասխան արձագանք և գրանցվել:***
դ.	Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները:	***Կազմակերպվել է 5 հանդիպում, որոնց ընթացքում քննարկվել են մի քանի հարցեր.*** ***- Սովորողների վարքագիծը*** ***- Սովորողների արտաքին տեսքն ու հագուստը*** ***- Սովորողների հաճախելիությունը և բացակայությունների հնարավոր հետևանքները*** ***- Դպրոցում գործող խմբակները*** ***- Դպրոցում ֆիզկուլտուրայի համազգեստ ունենալու հարցը***
ե.	Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադրվող աջակցությունը, դրա ձևերը և աջակցություն ստացող սովորողների տոկոսը:	-
զ.	Ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը:	***Հանդիպումներ, ծնողական ժողովներ, արտահերթ նիստեր***

է.	Ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը:	***100%***
ը.	Ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, ներգրավվածության ձևերը, նման աշխատանքներում ընդգրկված ծնողների տոկոսը:	***100%***
թ.	Այն ծնողների տոկոսը, ովքեր օգտվում են http://www.dasaran.am, http://www.ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am, http://lib.armedu.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից:	***Հիմնականում օգտվում են*** *http://www.ktak.am, http://emis.am կայքերից, դպրոցի ֆեյսբուքյան էջից և կայքից:*

Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքներին առնչվող հարցեր, գնահատվել են հաջողությունները, արձանագրվել են բացթողումներն ու թերացումները: Մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատվել են դասալսումների թերթիկը և հաստատվել ժամանակացույցերն՝ ըստ մեթոդական միավորումների: Բոլոր նիստերի ժամանակ քննարկվել է էլեկտրոնային մատենավարությունը, վեր են հանվել բացթողումները: Մատենավարությունն իրականացվել է առանց եռօրյա ժամկետը խախտելու: Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել առարկայական օլիմպիադաների, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների, ստուգարքների, գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արդյունքները:

Դասարանների մասնակցությունը միջոցառումներին, մրցույթներին, բաց դասեր, վիկտորինաներ, սպորտլանդիաներ

Դասարան	Առարկա	Թեմա	Ժամկետ
Ի դասարան	Մայրենի	Երբ գալիս է Ամանորը	22.12.2023
	Ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	17.03.2023
	Մայրենի	Հրաժեշտ այբբենարանին	20.05.2023
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
II դասարան	Մայրենի	Երբ գալիս է Ամանորը	22.12.2023
	Ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	17.03.2023
	մայրենի	«Հեքիաթների աշխարհում» ներկայացում	
		«Երկրաշարժից պաշտպանվելու	

		վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
III դասարան	մայրենի	Երբ գալիս է Ամանորը	22.12.2023
	ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	17.03.2024
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
IV դասարան	մայրենի	Ընթերցանության օր	09.02.2024
	ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	17.03.2024
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
V դասարան	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
	ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	21.03.2024
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
	մայրենի	Հովի. Թումանյանի հեքիաթների բեմադրում	20.02.2024թ
VI դասարան	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
	ֆիզկուլտուրա	Սպորտլանդիա	21.03.2024
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
		Հովի. Թումանյանի հեքիաթների բեմադրում	20.02.2024թ

VII դասարան	Հայոց պատմություն	Անկախության օր	22.09.2024
	Բոլոր առարկաներից	Վիկտորինա	14.03.2024
	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
VIII դասարան	Հայոց պատմություն	Անկախության օր	22.09.2024թ.
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024թ.
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
	Հայոց պատմություն	Անկախության օր	22.09.2024
	Հայոց լեզու	Վիկտորինա	14.03.2024
	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
	քիմիա	Բաց դաս «Ազոտի դատավարություն»	13.04.2024
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
	Հայոց պատմություն	Անկախության օր	22.09.2024

	գրականություն	Ասմունքի ժամ	22.03.2024թ
	Եկ. պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
XI դասարան		«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
	Հայոց պատմություն	Անկախության օր	22.09.2024
	Եկ պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
	գրականություն	Ասմունքի ժամ	22.03.2024թ
XII դասարան	ՆԶՊ	«Օդային տագնապ» ուսումնական վարժանք տարհանում	
		«Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ» տեղեկատվական դաս	
	ԵԿ պատմ	Զատկի ուրախ տոնն ու նշանակությունը	07.04.2024
		Վերջին դաս	25.05.2024

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցում գործում են հումանիտար,ԲՏՃՄ և տարրական մեթոդական միավորումները	Մեթոդական միավորման նախագահները ծանրաբեռնված են
Դպրոցում գործող խորհրդակցական մարմինները կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները	Մեթոդական միավորումների կողմից հանրակրթության նոր չափորոշիչների ներդրման գործընթացը հետևողական և շարունակական ուսումնասիրման վերլուծության կարիք ունի
Ծնողական խորհուրդը կապող օղակ է դպրոցի և ծնողի միջև	Ծնողական խորհրդի կողմից սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ առաջարկությունների բացակայություն

Ծնողական խորհուրդը ներգրավված է սովորողների արտադպրոցական ուսուցման կազմակերպման գործընթացում	Աշակերտական խորհուրդը ունի իրազեկվածության և նախաձեռնությունների պակաս
Մանկավարժական խորհուրդը ընդունում է որոշումներ մասնակցային միջավայրում	
Դպրոցը միացյալ կառավարման խորհուրդ ունի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցի հետ	
Դպրոցն իրականացնում է արդյունավետ ներառական կրթություն, բավարարվում են ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի զարգացման կարիքները	
Դպրոցում բռնության, օտարման, հալածանքի դեպքեր չեն գրանցվել	
Դպրոցում խրախուսվում է բազմակարծությունը, իրականացվում է մասնակցային կառավարում	

Հաստատության շենքային պայմանների և նյութատեխնիկական միջոցների նպատակային գործածությունը, ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցը կառուցվել է 1978 թվականին, բաղկացած է 5 մասնաշենքերից: Մասնաշենքերից 4-ը չեն օգտագործվում: Մեկ մասնաշենք մասնակի վերանորոգվել է 1995 թվականին: Աղբերք գյուղի միջնակարգ դպրոցը բնակավայրի միակ կրթական հաստատությունն է:

2018 թվականի հուլիս ամսին «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվել է դպրոցի շենքի ակնադիտական հետազննություն, ինչի արդյունքում շենքի փաստացի տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար /երրորդ աստիճան/, այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո, իսկ առանձին հատվածամասերում որոշ կոնստրուկտիվ տարրերի տեխնիկական վիճակը վթարային է: Առկա է եզրակացությունը: 2021 թվականի փետրվարի 5-ի երկրաշարժի հետևանքով շենքը էլ ավելի է վնասվել: Այս պահին դպրոցը գործում է մեկ մասնաշենքի միայն առաջին հարկում, հարմարեցված սենյակներում: Սպորտդահլիճը, հանդիսությունների դահլիճը գտնվում են վթարային մասնաշենքերում և չեն գործում: Անկախ անբարենպաստ շենքային պայմաններից, դպրոցը փորձում է ապահովել սովորողների կրթությունը:

Դպրոցական շենքում բարելավման աշխատանքներ իրականացնելու համար դպրոցի կողմից ևս ներդրումներ չեն իրականացվում, որը պայմանավորված է շենքի վթարային լինելու հանգամանքով: Դպրոցում չկան հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար բավարար հարմարեցումներ:

Դպրոցում շենքային պայմաններով պայմանավորված ապահովված չէ սովորողների և աշխատակազմի անվտանգությունը, սակայն յուրաքանչյուր տարի իրականացվում են արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման միջոցառումներ, իրականացվում է անձնակազմի և սովորողների ուսուցում:

Դպրոցի դասասենյակների մակերեսները համապատասխանում է սովորողների թվին՝ պայմանավորված դասարաններում սովորողների փոքր թվաքանակով: Դասասենյակները հարմարեցված են, հագեցած չեն ՏՀՏ միջոցներով, առկա է սովորողների թվին համապատասխան աշակերտական գույք: Դասասենյակներում ոչ բոլոր վայրերում է լուսավորությունը համապատասխանում սահմանված նորմատիվներին:

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, Տ-աձև, Ո-աձև, խառը)	Սեղան-նստարանների քանակը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ N1	32	Շարքերով	4 սեղան, 8 աթոռ	80սմ-50սմ

Դասասենյակ N2	54	Շարքերով	8 սեղան, 16 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N3	34	Շարքերով	5սեղան, 10 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N4	12,5	Շարքերով	3 սեղան, 6 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N5	12.5	Շարքերով	3 սեղան, 6 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N6	32	Շարքերով	5 սեղան, 10 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N7	32	Շարքերով	4 սեղան, 8 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N8	10	Շարքերով	2 սեղան, 4 աթոռ	80սմ-50սմ
Դասասենյակ N9	16	Շարքերով	5 սեղան, 10 աթոռ	80սմ-50սմ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ)
Դասասենյակ N1	32	5,3	Ավել 3.3
Դասասենյակ N2	54	6,0	Ավել 4.0
Դասասենյակ N3	34	4,9	Ավել 2.9
Դասասենյակ N4	12,5	4,2	Ավել 2.2
Դասասենյակ N5	12.5	4,2	Ավել 2.2
Դասասենյակ N6	32	8,0	Ավել 6.0
Դասասենյակ N7	32	10,7	Ավել 8.7
Դասասենյակ N8	10	10,0	Ավել 8.0
Դասասենյակ N9	16	3,2	Ավել 1.2

Դպրոցի այս մասնաշենքում կան նաև այլ տարածքներ, որոնք նոր չափորոշիչների ներդրմանը զուգահեռ դասարանների քանակի ավելացման դեպքում կարող են հարմարեցվել որպես դասասենյակներ:

Դպրոցի մարզադահլիճը շահագործման պիտանի չէ: Ֆիզկուլտուրա առարկան ձմռան ամիսներին դասավանդվում է դասասենյակներում, իսկ ամռան ամիսներին դպրոցի բակում, որը ևս կարիք ունի բարեկարգման, մարզական գույքերով համալրման:

Դպրոցի հանդիսությունների դահլիճը ևս չշահագործվող մասնաշենքում է և ենթակա չէ օգտագործման, հանդիսությունների ժամանակ օգտագործվում է դպրոցի բակը, միջանցքը, դասասենյակները:

Անհրաժեշտություն է դպրոցի համար ինչպես նոր շենքի, այնպես էլ ֆիզկուլտուրայի և հանդիսությունների դահլիճների կառուցումը:

Դպրոցն ունի փոքր գրադարան, որտեղ մասնագիտական և գեղարվեստական գրականությունը հիմնականում նախորդ դարի է, նոր գրականությամբ համալրումներ գրեթե չեն լինում: Գրադարանում չկա համակարգիչ, գրադարանավարումը համակարգչային ծրագրով չի իրականացվում: Գրադարանից ամսական կտրվածքով օգտվում են մի քանի սովորողներ, համայնքի բնակչությունը հետաքրքրություն չի ցուցաբերում:

Ցուցանիշ	**Տվյալներ**
Գրադարանի տարածքը քմ-ով	54
Գրադարանում համակարգիչների թիվը	-
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	-
Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը	16
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում	538
-գեղարվեստական գրքերի թիվը	132
-տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	86
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	102
-ամսագրերի թիվը	138
-այլ	80
Վերջին անգամ գարդարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը	2015թ.
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	29
Պատասխանել այո կամ ոչ	
Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը	ոչ
Անցկացվո՞ւմ են գրադարանում դասեր և ուսումնական պարապմունքներ	ոչ
Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն	ոչ
Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանվարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ	ոչ

Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուսներից	ոչ
Գարդարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուսներ, որքան	ոչ
Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադրանի գրադարակներին և պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ	այո
Գրադրանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր	ոչ
Գրադանավարը կարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից	ոչ

Դպրոցում գործում է երկու սանհանագույց, առանձնացված տղաների և աղջիկների համար, առկա է մշտական ջրամատակարարում, ապահովված է սանիտարահիգենիկ բավարար վիճակ, սակայն սանհանգույցները կարիք ունեն վերանորոգման, իսկ գույքը ենթակա է փոխարինման:

Շենքի հարկը	Սանհանգույցների թիվը	Աղջիկների սան-հանգույցի առկայությունը	Տղաների սան-հանգույցի առկայությունը	Հիգիենայի պարագաների առկայությունը	Հարմարեց վածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին	Վերանորոգված են, թե ոչ
1-ին հարկ	2	այո	այո	այո	ոչ	ոչ
2-րդ հարկ	2	Ենթակա չեն շահագործման				

Դպրոցում գործում է ճաշարան, որտեղ տաք սննդից օգտվում են փոքր սաները: Տարական դասարանների սովորողներին սննդով ապահովման ծրագրին մասնակցություն ունեն նաև ծնողները:

Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան)	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ)	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը	Տաք սննդի հնարավորությունը	Վերանորոգված է, թե ոչ
Ճաշարան	40անձ 54քմ	**Ոչ** բացակայում է տաք ջուր	**Այո**	**Այո**	**Ոչ**

Ձմռան ամիսներին դպրոցում ջեռուցվում են միայն անհրաժեշտ տարածքները, ջեռուցումն իրականացվում է էլեկտրատաքացուցիչներով, հեղուկ վառելիքով՝ վառարանային ջեռուցմամբ, դժվարությամբ է ապահովվում անհրաժեշտ ջերմաստիճան, հաճախ նաև ջերմաստիճանը ցածր է լինում սահմանված նվազագույն մակարդակից:

Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակներ	Նավթի վառարաններով	17-18^0 C	8^{00} –ից - 15^{00}
Լաբորատորիաներ	Չի ջեռուցվում		
Առանձնասենյակ	Նավթի վառարան	14-16^0 C	8^{00} –ից - 15^{00}
Մարզադահլիճ	Չի ջեռուցվում	0-3^0 C	
Միջոցառումների դահլիճ	Չի ջեռուցվում	0-3^0 C	
Ուսուցչանոց	Էլեկտրաջեռուցիչ	14-16^0 C	8^{00} –ից - 15^{00}
Գրադարան	Չի ջեռուցվում	3-5^0 C	
Արհեստանոց	Չի ջեռուցվում	0-3^0 C	
Բուժկետ	Չի ջեռուցվում	0-3^0 C	
Ճաշարան	Էլեկտրաջեռուցիչ	16-17^0 C	8^{00} –ից - 12^{00}
Միջանցքներ	Չի ջեռուցվում	0-3^0 C	

Դպրոցում չկա բուժկետ ըստ անհրաժեշտության դպրոց է այցելում համայնքի բուժաշխատողը:

Դպրոցում առկա է միայն քիմիայի և ֆիզիկայի միասնական լաբորատորիա, որը թերհագեցած է ուսումնական և փորձարարական նյութերով: Հաջորդիվ պետական աջակցությամբ լաբորատորիաների համալրման համար անհրաժեշտ է նախապատրաստել համապատասխան տարածքներ:

Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, որտեղ առկա քիչ թվով համակարգիչներն արդեն հնամաշ են և շահագործման ընթացքում հաճախ խնդիրներ են առաջացնում: Դպրոցում չկա ինժեներական լաբորատորիա:

Դպրոցն ունի մեկ նոթբուք, որն օգտագործվում է ինչպես կառավարչաան նպատակներով, այնպես էլ ըստ անհրաժեշտության դասի ընթացքում սովորողներին տարբեր վիդեոդասեր ցուցադրելու:

Դպրոցում բացակայում է ժամանակակից մարզագույք, կարիք ունի ամբողջությամբ վերազինման և արդիականացման:

Դպրոցը նոր լաբորատորիաներով կհամալրվի պետական ծրագրի շրջանակներում, ինչը կնպաստի բնագիտական առարկաների ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Տարածքը (քմ)	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները,պարագաները (թվարկել հիմնականը և նշել քանակները)	Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը	Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	54	ունի	3 սեղան, 6 աթոռ, 4 պահարան, տարբեր սարքեր և սարքավորումներ		***Գույքի, սարքավորումների թարմացում***
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	54	ունի	3 սեղան, 6 աթոռ, փորձանոթներ, քիմիական նյութեր	Փորձանյութեր, Մենդլեևի աղյուսակ	***Փորձարարական նյութերի նորացում***
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ					***Կաբինետի ստեղծում***
Աշխարհագրության լաբորատորիա, կաբինետ					***Կաբինետի ստեղծում***
Պատմության կաբինետ					***Կաբինետի ստեղծում***
Ռազմագիտության կաբինետ	54	ունի	6 սեղան, 12 աթոռ, պատգարակ, հակագազ	Նկարներ, պաստառներ	
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	24	ունի	4 սեղան, 8 աթոռ, 4 համակարգիչ 2 տպիչ		***Համակարգչային տեխնիկայի համալրում***
Օտար լեզուների լինգաֆոնային կաբինետ					***Կաբինետի ստեղծում***
Արհեստանոց Փայտի մշակման (նշել ինչպիսի)	54	Վթարային շենքում է, չի շահագործվում	Ապակոմպլեկտավորած հաստոցներ		***Հաստոցներ***

Միջոցառումների դահլիճ	129.6	Վթարային շենքում է, չի շահագործվում	Նստարաններ		***Նոր դահլիճի կառուցման կարիք***
Մարզադահլիճ	305	Վթարային շենքում է, չի շահագործվում	Մարմնամարզական պատ, վոլեյբոլի ցանց, այծիկ, ներքնակ, պտտա ձող, նստարան ներ, թենիսի դաշտ, ծանրաձող		***Նոր դահլիճի կառուցման կարիք***
Այլ Շախմատի կաբինետ	34	ունի	շախմատ, շաշկի		

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ***
Դպրոցը բնակավայրի միակ կրթական հաստատությունն է,	Դպրոցի շենքը գտնվում է վթարային վիճակում, կարիք ունի դպրոցական նոր շենքի կառուցման
Գործում է ճաշարան, որի տաք սննդից օգտվում են տարրական դպրոցի սաները	Արհեստանոցը, սպորտդահլիճը և հանդիսությունների դահլիճը գտնվում են վթարային մասնաշենքում և չեն օգտագործվում
Առկա է շուրջօրյա ջրամատակարարում և էներգամատակարարում	Դպրոցում չկա անվտանգ կենտրոնացված ջեռուցման համակարգ, ջեռուցվում է հեղուկ վառելիքով, վառարաններով
Դպրոցի տարածքը հեռացված է ճանապարհային գոտուց	Դպրոցը չունի բուժկետ
Քիմիայի լաբորատորիայի որոշ նյութեր երբեմն օգտագործվում են դասերի ընթացքում	Դպրոցը հագեցած չէ ժամանակակից լաբորատորիաներով
Դպրոցը համալրված է անհրաժեշտ քանակով աշակերտական գույքով	Դպրոցին կից տարածքը բարեկարգման և ցանկապատման կարիք ունի
Դպրոցի առկա նյութատեխնիկական բազան օգտագործվում է նպատակային, առավելագույն արդյունք ստանալու նպատակով	Դպրոցը ապաստարան չունի

	Համակարգչային սենյակը կարիք ունի արդիականացման, նոր գույքով համալրման
	Սանհանգույցները կարիք ունեն բարեկարգման
	Դպրոցի գրադարանը հազվադեպ է համալրվում ուսումնական նյութերով
	Դասասենյակները կահավորված չեն արդիական ՏՀՏ միջոցներով
	Դպրոցի շենքային հնարավորությունները նպատակային չեն օգտագործվում դրանց հիմնական մասի շահագործման համար վտանգավոր լինելու հետևանքով

ՆՊԱՏԱԿ 1

Դպրոցում կրթության որակի բարելավում արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացմամբ: Ուսուցման գործընթացում հանրակրթության նոր չափորոշիչների լիարժեք կիրառում:

ԽՆԴԻՐ 1.1 Կրթական գործընթացը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան կազմակերպում, ցածր առաջադիմությամբ սովորողների համար երկարօրյա ուսուցման կազմակերպում:

ԽՆԴԻՐ 1.2 Սովորողների մոտ ինքնուրույն աշխատանքներ իրականացնելու կարողությունների զարգացում:

ԽՆԴԻՐ 1.3 Սովորողներին տարբեր կրթական մրցույթներում, միջոցառումներում ներգրավում, նրանց հետ լրացուցիչ աշխատանքների իրականացում, ուսման նկատմամբ հետաքրքրության բարձրացում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Հանրակրթության նոր չափորոշիչները դպրոցում կիրառել լիազոր մարմնի կողմից ընդունված ժամանակացույցերին համապատասխան, ապահովել անհրաժեշտ պայմաններ չափորոշչային ուսուցման կազմակերպման	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, չափորոշիչներ, ժամանակացույց, լիազոր մարմնի հրաման	Յուրաքանչյուր տարի լիազոր մարմնի կողմից հաստատված ժամանակացույցին համաձայն դասարաններն անցում են կատարել նոր չափորոշչային պահանջներով ուսուցման Դպրոցում ստեղծված են չափորոշչային պահանջներին համապատասխան ուսուցման կազմակերպման համապատասխան պայմաններ
Դպրոցում յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպել սովորողների գիտելիքների ստուգում, բացահայտել ցածր առաջադիմությամբ սովորողներին	Յուրաքանչյուր կիսամյակ, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում Գրավոր աշխատանքներ, հարցաշարեր, թեստեր, ՏՀՏ միջոցներ	Սովորողների մոտ չափորոշչային պահանջներին համապատասխան կարողություններ ունեցող սովորողների թիվը և տոկոսը

			Տրված գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծությունը, տարեկան գնահատականների հետ շեղումների առկայությունը Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը
Ցածր առաջադիմությամբ սովորողների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում	Յուրաքանչյուր կիսամյակ, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, ուսումնական նյութեր, ծրագրեր, ձեռնարկներ, ՏՀՏ միջոցներ	Դպրոցում չափորոշչային պահանջներին համապատասխան երկարօրյա ուսուցման խմբերի առկայություն Երկարօրյա ուսուցում ստացող սովորողների թիվն ըստ առարկաների և դասարանների Երկարօրյա ուսուցման արդյունքում դրական արդյունքներ արձանագրած սովորողների թիվը և տոկոսը
Բարձր առաջադիմությամբ սովորողների հետ լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ նախապատրաստել օլիմպիադաներին մասնակցության	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում Մանկավարժների աշխատանք, ուսումնական նյութեր, ծրագրեր, ՏՀՏ միջոցներ	Դպրոցում ուսուցչական անձնակազմը պատրաստակամ է սովորողների հետ լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու, այդպիսի ուսուցիչների թիվը և տոկոսը

			Օլիմպիադաներին մասնակից սովորողների թիվը, նրանցից մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատությամբ
Արտադասարանական ուսուցման ակտիվացում, պարտադիր և դպրոցական բաղադրիչի հաշվին ձևավորված խմբակների գործունեության արդյունավետության բարձրացում, բոլոր սովորողների մասնակցության ապահովում արտադասարանական ուսուցմանը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, ծնողական ներդրումներ, խմբակի գործունեության ծրագիր, այլ պարագաներ, նյութեր, ՏՀՏ միջոցներ	Արտադասարանական ուսուցման առկայություն դպրոցում, սովորողների մեծ ցանկություն մասնակցելու արտադասա-րանական խմբակներին Արտադասա-րանական խմբակների թիվը, դրանց հաճախող սովորողների թիվը և տոկոսը
Սովորողների մոտ զարգացնել նախագծային աշխատանքներ իրականացնելու կարողությունները, կազմակերպել դասընթացներ, քննարկումներ, ապահովել բոլոր սովորողների մասնակցությունը նախագծային աշխատանքներին՝ ըստ դասարանների	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում Նախագծային աշխատանքների թեմաներ, իրականացման համար անհրաժեշտ նյութեր, ՏՀՏ սարքավորումներ	Նախագծային ուսուցումը շեշտադրվում է որպես առանձին կարևոր բաղադրիչ, և ուշադրություն է դարձվում բոլոր սովորողների ներգրավվածությանը Նախագծային աշխատանքներ իրականացնող սովորողների թիվը և տոկոսը

			Իրականացված նախագծային աշխատանքների քանակը, դինամիկան նախորդ տարիների համեմատ Նախագծային աշխատանքներ իրականացնելու հմտություններ զարգացնելու նպատակով կազմակերպված սեմինարների թիվը, մասնակից սովորողների, մանկավարժների թիվը և տոկոսը
Դասապրոցեսները կազմակերպել ՏՀՏ միջոցների կիրառմամբ, ավելացնել գործնական պարապմունքների թիվը, ստեղծել պայմաններ արդյունավետ գործնական դասընթացներ իրականացնելու համար	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, ՏՀՏ սարքավորումներ, միջոցներ, դասընթացներ, ուսումնական նյութեր	ՏՀՏ միջոցների կիրառմամբ անցկացվող դասերի թիվը և տոկոսն ըստ առարկաների Դպրոցում ՏՀՏ միջոցներով համալրվածության աստիճանը, ՏՀՏ կահավորմամաբ դասասենյակների քանակը, դինամիկան նախորդ տարիների համեմատ Դասապրոցեսում ՏՀՏ կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը

ՌԻՍԿԵՐ	**ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
Սովորողների կողմից ուսման նկատմամբ ցուցաբերվող անտարբերություն,	Սովորողների հետ բացատրական աշխատանքների իրականացում, նրանց ակտիվությունը խթանող միջոցների

ուսումնառության ցածր արդյունքների առկայություն	կիրառում, տնային ուսուցման նկատմամաբ ծնողների ուշադրության բարձրացում
Օլիմպիադաներին սովորողների քիչ մասնակցություն, մասնակցության մոտիվացիայի պակաս	Ձեռքբերումներ արձանագրած սովորողներին խրախուսում և արժևորում, նրանց հեղինակության բարձրացում դպրոցում, այս կերպ մյուս սովորողների մոտիվացիայի խթանում
Նախագծային աշխատանքների իրականացման խմբերում ոչ բոլոր սովորողների կողմից ակտիվ աշխատանք	Նխագծային աշխատանքներն իրականացնելիս յուրաքանչյուր սովորողի համար նախատեսել կոնկրետ պարտականություններ նախագծի շրջանակներում ըստ իր կարողությունների, հետևողական լինել դրանց ինքնուրույն իրականացմանը
ՏՀՏ միջոցներով դպրոցի ոչ բավարար հագեցվածություն, ՏՀՏ կիրառմամբ դասեր անցկացնելու դժվարություններ	Բարձրացնել դպրոցում առկա ՏՀՏ միջոցների օգտագործման արդյունավետությունը, դասերը պլանավորել այնպես որպեսզի առկա ռեսուրսներն օգտագործվեն առավելապես, հնարավորության դեպքում վերազինել ՏՀՏ բազան

ՆՊԱՏԱԿ 2

Որակավորված և բարձր մասնագիտական պատրաստվածությամբ մանկավարժական կազմի ապահովում, ինքնակրթության միջոցառումներին աջակցում:

ԽՆԴԻՐ 2.1 Մանկավարժների մասնագիտական զարգացման կարիքների բավարարում, ուսուցման կազմակերպման նոր մեթոդների ծանոթացում, մասնագիտական հմտությունների բարելավում:

ԽՆԴԻՐ 2.2 Կամավոր ատեստավորված մանկավարժական կազմի ապահովում:

ԽՆԴԻՐ 2.3 Մանկավարժների մոտիվացիայի բարձրացում, խրախուսում և արժևորում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Մանկավարժների համար կազմակերպել մասնագիտական զարգացման դասընթացներ, վերապատրաստումներ՝ հաշվի առնելով նրանց զարգացման կարիքները	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, վերապատրաստման ծրագրեր, պայմանագրեր, ուսումնական նյութեր, ձեռնարկներ, ՏՀՏ միջոցներ	Մանկավարժների զարգացման կարիքների բավարարման համար կազմակերպված դասընթացների թիվը, մասնակից մանկավարժների թիվը և տոկոսը Մասնագիտական զարգացման կարիքը բավարարած մանկավարժների թիվը և տոկոսը
Յուրաքանչյուր տարի ապահովել պարտադիր ատեստավորման ենթակա մանկավարժների զարգացման կարիքների գնահատումը, վերապատրաստումներին մասնակցությունը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, վերապատրաստման ծրագրեր, պայմանագրեր, ուսումնական նյութեր, ձեռնարկներ, ՏՀՏ միջոցներ, էլեկտրոնային ռեսուրսներ	Մանկավարժների զարգացման կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումները, դրանց օբյեկտիվությունը, մանակավարժի կարծիքը տվյալ գնահատման վերաբերյալ

			Պարտադիր ատեստավորման ենթակա մանկավարժների թիվը, վերապատրաս-տումներին մասնակցած և ատեստավորված մանկավարժների թիվը և տոկոսը
Մեթոդական միավորումներում կազմակերպել առաջավոր փորձի ուսումնասիրություններ, զեկույցների, հետազոտական աշխատանքների պատրաստում և ներկայացում	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում Հանդիպումներ, քննարկումներ, էլեկտրոնային ռեսուրսներ, ՏՀտ միջոցներ, մասնագիտական գրականություն	Մեթոդական միավորումների ներդրման գնահատականը մանկավարժների ինքնակրթության միջավայրի բարելավման գործում Մեթոդական միավորումներում կազմակերպված մասնագիտական քննարկումների թիվը, մասնակից մանկավարժների թիվը և տոկոսը Հետազոտական աշխատանքներ իրականացնող մանկավարժների թիվը, իրականացված հետազոտական աշխատանքների քանակը, աճը նախորդ տարիների համեմատ
Մանկավարժների համար կազմակերպել ՏՀՏ գիտելիքների, ՀՊՁ	Յուրաքանչյուր ուսումնական	Դպրոցի բյուջե, դասընթացների պայմանագրեր,	ՏՀՏ հմտությունների զարգացման

կիրառման հմտությունների ավելացմանն ուղղված դասընթացներ, բարելավել մասնագիտական կարողությունները	տարի, 2025-2030թթ.	ուսումնական ծրագրեր, ՏՀտ միջոցներ, առցանց կապի միջոցներ	ուղղությամբ կազմակերպված դասընթացների թիվը, մասնակից մանկավարժների թիվը և տոկոսը ՀՊՁ կիրառման հմտությունները զարգացնող դասընթացների թիվը, մասնակից մանկավարժների թիվը և տոկոսը Դասապրոցեսում ՏՀՏ կիրառող մանկավարժների թիվը և տոկոսը ՀՊՁ-ներին տիրապետող և կիրառող մանկավարժների թիվը և տոկոսը
Դպրոցում ապահովել բոլոր առարկաների գծով համապատասխան մանկավարժների առկայությունը՝ դասապրոցեսի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, մրցույթներ, հայտարարություններ	Դպրոցում մանկավարժական կազմի համալրվածության աստիճանը, թափուր հաստիքները Իրենց մասնագիտությամբ դասավանդող մանկավարժների թիվը և տոկոսը Մանկավարժների համապատաս-խանությունն իրենց պաշտոնային դրույթներին

Խրախուսել մանկավարժների կողմից կամավոր ատեստավորումներին մասնակցությունը, ցուցաբերել աջակցություն ատեստավորման նյութերն ուսումնասիրելու ընթացքում, ավելացնել կամավոր ատեստավորված մանկավարժների թիվը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, Կամավոր ատեստավորման նյութեր, հարցաշարեր, ուսումնական ձեռնարկներ, ՏՀՏ միջոցներ, մանկավարժների փորձի փոխանակման միջոցառումներ	Կամավոր ատեստավորված մանկավարժների թիվը, դինամիկան նախորդ ուստարիների համեմատ Մեթոդական միավորումներից կամավոր ատեստավորմանը մասնակցություն ունենալու համար աջակցություն ստացող մանկավարժների թիվը և տոկոսը, նրանցից կամավոր ատեստավորմանը մասնակցած մանկավարժների թիվը և տոկոսը Կամավոր ատեստավորմանը մասնակցության ցանկություն ունեցող մանկավարժական համակազմի առկայություն
Մանկավարժների մոտիվացիայի բարձրացման նպատակով պարբերաբար արժևորել մանկավարժներին, ըստ առկա հնարավորությունների տրամադրել նաև նյութական խրախուսումներ, դպրոցում կիրառել	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, շնորհակալագիր, պատվոգիր, դրամական միջոցներ	Մանկավարժների արժևորման նպատակով կազմակերպված միջոցառումների թիվը, արժևորված մանկավարժների թիվը և տոկոսը Նյութական խրախուսումներ ստացած

խրախուսումների տարբերակված ընթացակարգեր			մանկավարժների թիվը և տոկոսը Դպրոցում խրախուսման և արժևորման կարգի առկայությունը, դրանցում չափելի գործիքների կիրառությունը Խրախուսման կարգում իրականացված փոփոխությունները, բարելավումները Խրախուսման կարգը տարածվում է բոլոր աշխատողների վրա

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Մանկավարժների կողմից ինքնակրթության ցածր մակարդակ, կամավոր ատեստավորումներին մասնակցության ցանկության բացակայություն	Մանկավարժների հետ շարունակական աշխատանքների իրականացում, մասնագիտական քննարկումներում ներգրավվում, մեթոդականած աջակցությունների ցուցաբերում, կամավոր ատեստավորման նյութերի քննարկում, նրանց ակտիվության խթանում, դեպի ինքնակրթությունը ուշադրության հրավիրում
Պարտադիր ատեստավորման ենթակա մանկավարժների կողմից ոչ լուրջ մոտեցում վերապատրաստումներին, ստացած գիտելիքների չկիրառում, տարեց մանկավարժների կողմից նոր մեթոդների դժվար յուրացում	Վերապատրաստված մանկավարժների մոտ վերապատրաստման արդյունքների գնահատում, պրակտիկայում դրանց կիրառության մոնիթորինգ, նոր մեթոդներով ուսուցման կազմակերպման ցուցադրական դասերի անցկացում, մանկավարժների փորձի փոխանակման ակտիվացում
Մանկավարժների խրախուսման նպատակով ֆինանսական միջոցների բացակայություն	Մանկավարժների մոտիվացիան բարձրացնել արժևորման տարբեր գործիքակազմեր կիրառելով, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման արդյունքում խնայված միջոցներն առաջարկել ուղղել պարգևատրման ֆոնդին

ՆՊԱՏԱԿ 3

Դպրոցում բազմակարծիք, ներառական, մասնակցային միջավայրի ապահովում: Բռնության, օտարման, հալածանքի կանխարգելման միջոցառումների անցկացում:

ԽՆԴԻՐ 3.1 Դպրոցում բազմակարծության խրախուսում, որոշումների մասնակցային կայացում, խորհրդակցական մարմինների հետ սերտ համագործակցության ապահովում:

ԽՆԴԻՐ 3.2 ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում, նրանց հետ իրականացվող աշխատանքների ավելացում:

ԽՆԴԻՐ 3.3 Դպրոցում սովորողների ապահով միջավայրի ստեղծմանն ուղղված միջոցառումների անցկացում, բռնության, օտարման, հալածանքի դեպքերի նվազագույնի հասցնում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Մշտապես մասնակցել խորհրդակցական մարմինների նիստերին, աջակցել խորհրդակցական մարմիններին իրենց գործառույթների իրականացմանը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, նիստեր, նիստերի օրակարգեր, խորհրդակցական մարմինների աշխատակարգեր, կանոնադրություն, ՏՀՏ միջոցներ, տնօրենի մարդկային ռեսուրս	Խորհրդակցական մարմինների նիստերին տնօրենի մասնակցության թիվն ուստարվա ընթացքում Խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ցուցաբերված աջակցությունները
Խորհրդակցական մարմինների անդամների համար կազմակերպել սեմինարներ, դասընթացներ՝ միտված նրանց կարողունակությունների, իրավունքների, պարտականությունների իմացության ավելացմանը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, սեմինարներ, դասընթացներ, դրանց պայմանագրեր, տնօրենի, համակարգողի մարդկային ռեսուրսներ, դասընթացավարներ	Խորհրդակցական մարմինների անդամների համար կազմակերպված սեմինարների, դասընթացների քանակը, մասնակիցների թիվը և տոկոսը Դպրոցում իրենց իրավունքներին և պարտականությունների ն տիրապետող խորհրդակցական

			մարմինների առկայություն
Խորհրդակցական մարմիններում հանդես գալ դպրոցի ուսումնադաստիա-րակչական աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություններով, լսել առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ, կայացնել առաջարկությունների կատարման վերաբերյալ համատեղ որոշումներ	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, հաշվետվություններ, առաջարկություններ, քննարկումներ, ՏՀՏ միջոցներ, տնօրենի, խորհրդակցական մարմինների անդամների մարդկային ռեսուրսներ	Խորհրդակցական մարմիններին ՈՒԴԱՊ կատարման ընթացքի վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների թիվն ուստարվա ընթացքում Խորհրդակցական մարմինների կողմից ուսումնադաստիա-րակչական աշխատանքների բարելավման ուղղությամբ ներկայացված առաջարկությունների թիվը, դրանց ընդունման տոկոսը Դպրոց խորհրդակցական մարմիններ ակտիվ կապի առկայություն
Դպրոցում ապահովել մասնակցային կառավարում, խրախուսել խորհրդակցական մարմինների կողմից քննարկվող նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, կայացնել մասնակցային որոշումներ	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, նախագծեր, հանդիպումներ, քննարկումներ, տնօրենի, խորհրդակցական մարմինների մարդկային ռեսուրսներ	Խորհրդակցական մարմինների կողմից որոշումների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների թիվը, դրանց ընդունման տոկոսը Մասնակցային քննարկումների արդյունքում ընդունված որոշումների թիվը Դպրոցում մասնակցային

			կառավարման իրականացում
Դպրոցում բարելավել ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման կազմակերպման միջավայրը, առկա ռեսուրսները, ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցումը կազմակերպել առանձին ծրագրերով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի զարգացման կարիքը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ նյութեր, շենքային հարմարեցումներ, դրանց ձեռքբերումների, կառուցման պայմանագրեր, ուսումնական ծրագրեր, ԱՈՒՊ-ներ, ՏՀՏ միջոցներ, տնօրենության, մանկավարժների մարդկային ռեսուրսներ	ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման կազմակերպման համար առկա խոչընդոտները (նկարագրություն), դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը ԿԱՊԿՈՒ սովորողների համար բացված ԱՈՒՊ-ների թիվն ուստարվա ընթացքում Դպրոցում ռեսուրս-սենյակի առկայությունը Ուստարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծված նոր հարմարեցումները, ձեռք բերված ուսումնական նյութերը
Դպրոցում մշտապես հետևողական լինել ներքին կարգապահական կանոնների պահպանմանը, կազմակերպել բռնության, օտարման, վնասակար երևույթների դեմ պայքարի միջոցառումներ, բարձրացնել սովորողների կարգապահության մակարդակը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, զրույցներ, քննարկումներ, ներքին կարգապահական կանոններ, ՏՀՏ միջոցներ, պաստառներ, ուսումնական այլ նյութեր, տնօրենության, դասղեկների, մարդկային ռեսուրսներ	Դպրոցում ներքին կարգապահական կանոնների առկայությունը, սովորողների, աշխատողների ներքին կարգապահական կանոններին իրազեկվածության աստիճանը Դպրոցում կազմակերպված բռնության, օտարման, վնասակար երևույթների դեմ պայքարի միջոցառումների թիվը, մասնակից սովորողների թիվը և տոկոսը

			Դպրոցում արձանագրված բռնության, օտարման, վնասակար երևույթների դեպքերը, դրանց թիվը, դինամիկան նախորդ տարիներ համեմատ Սովորողների կողմից բռնության, օտարման կանխարգելման ուղղությամբ պատրաստված նյութերի քանակը, սովորողների մասնակցության ձևերը դպրոցում ընդհանուր կարգապահության ապահովման գործընթացին Ոստիկանության մարմինների հետ անցկացված համատեղ ծրագրերը, ուղղված բռնության, օտարման, հալածանքի կանխարգելմանը

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Խորհրդակցական մարմինների քննարկմանը ներկայացվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների չներկայացում, անտարբերության դրսևորում	Խորհրդակցական մարմինների հետ կազմակերպել հանդիպումներ ներկայացված նախագծերը քննարկելու նպատակով, նվազեցնել առցանց ձևաչափով աշխատանքները, տեղում յուրաքանչյուր անդամի հետ անհատական զրույցով, կարծիքները լսելով խթանել բոլորի ներգրավվածությունը
Դպրոցական կյանքին խորհրդակցական մարմինների թույլ ներգրավվածություն	Խորհրդակցական մարմիններին դպրոցում իրականացվող ծրագրերում ընդգրկում, նրանց իրազեկվածության բարձրացում, շփման ակտիվացում

Բռնության, օտարման, հալածանքի կանխարգելման միջոցառումների, դասղեկական ժամերի անարդյունավետություն	Միջոցառումներն իրականացնել կոնկրետ ծրագրերով, հետևողական լինել ծրագրերով նախանշված բոլոր փուլերի իրականացմանը, ապահովել սովորողների մասնակցությունը
ԿԱՊԿՈՒ սովորողների համար դպրոցում արդյունավետ ուսուցման կազմակերպման համար ուսումնական նյութերի, մասնագետների բացակայություն	ՏՄԱԿ-ի հետ համագործակցության ակտիվացում, նրանց մասնագիտական ներուժի օգտագործում

ՆՊԱՏԱԿ 4

Համայնքի, տարածքային կառավարման լիազոր մարմնի, ծնողական համայնքի հետ համագործակցության ընդլայնում, համայնքում դպրոցի դերի բարձրացում:

ԽՆԴԻՐ 4.1 Դպրոցի և համայնքի միջև սերտ համագործակցության ձևավորում և զարգացում, համայնքի հնարավորություններն ի նպաստ դպրոցի օգտագործում:

ԽՆԴԻՐ 4.2 Տարածքային կառավարման լիազոր մարմնի հետ շփումների ակտիվացում, դպրոցին առնչվող խնդիրների բարձրաձայնում:

ԽՆԴԻՐ 4.3 Ծնողական համայնքին ներգրավում ուսումնադաստիրակչական աշխատանքների իրականացման գործընթացին, սովորողների արտադպրոցական ուսուցման կազմակերպմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Սովորողներին մշտապես ներգրավել համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին, նախաձեռնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, համայնքի կողմից ֆինանսական և նյութական այլ հատկացումներ, համայնքային ծրագրերին մասնակցության համար անհրաժեշտ պարագաներ՝ ըստ ծրագրերի ուղղվածության, կիրականացվի դպրոցի մանկավարժների, սովորողների մարդկային ռեսուրսներով	Համայնքային միջոցառումներում ներգրավված սովորողների թիվը և տոկոսը Դպրոցի նախաձեռնությամբ կազմակերպված շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների քանակը, մասնակից սովորողների թիվը և տոկոսը Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված բարձր իրավագիտակ-ցություն սովորողների շրջանում
Համայնքի հետ համագործակցությամբ հայտնաբերել կրթությունից դուրս	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Դպրոցի բյուջե, համայնքի կողմից ֆինանսական և նյութական	Համայնքում կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը,

մնացած երեխաներին և ապահովել համայնքի դպրոցահասակ բոլոր երեխաների դպրոց հաճախումը, համայնքի հետ իրականացնել ծնողազուրկ, անապահով ընտանիքների երեխաներին աջակցության սոցիալական ծրագրեր		հատկացումներ, ՏՀՏ միջոցներ, սովորողների հաշվառման էլեկտրոնային մատյան, բնակչության տեղեկագրեր, սոցիալական օգնության փաթեթներ, անհրաժեշտ պարագաներ, կիրականացվի տնօրենության և համայնքի ղեկավարության ուժերով	նրանցից կրթության մեջ ներգրավված երեխաների թիվը Համայնքի կողմից իրականացված սոցիալական աջակցության ծրագրերի թիվը, դրանցից օգտվող սովորողների թիվը և տոկոսը Համայնքում բոլոր երեխաների համար կրթության հավասար պայմանների առկայություն
Համայնքի հետ համատեղ մասնակցել դրամաշնորհային և այլ ծրագրերի, բարելավել դպրոցի և համայնքի որոշակի կարիքներ	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, անհրաժեշտ է դպրոցի աշխատակազմի, սովորողների, համայնքի աշխատակազմի, ղեկավարության մարդկային ռեսուրսները, դրամաշնորհային ծրագրերի մասնակցության հայտեր, ՏՀՏ միջոցներ	Համայնքի հետ համատեղ դրամաշնորհային և այլ ծրագրերին մասնակցության թիվը, հաղթած դրամաշնորհների քանակը, դրանցով բավարարված համայնքային կարիքների նկարագրությունը Դպրոցի ներգրավվածության աստիճանը համայնքային խնդիրների լուծմանը, դպրոց-համայնք ակտիվ կապի առկայությունը
Համայնքի բնակչության համար կազմակերպել	Յուրաքանչյուր ուսումնական	Դպրոցի բյուջե, միջոցառումների	Համայնքի բնակչության

մշակութային միջոցառումներ, ձևավորել կամավորական խմբեր՝ աջակցել համայնքի միայնակ ծերերին	տարի, 2025-2030թթ.	ծրագրեր, սցենարներ, ՏՀՏ միջոցներ, միջոցառումների կազմակերպման անհրաժեշտ պարագաներ, սովորողների, մանկավարժների մարդկային ռեսուրսներ, սովորողների կամավորական աշխատանք	համար կազմակերպված միջոցառումների թիվը, մասնակից սովորողների թիվը և տոկոսը, համայնքի բնակիչների թիվը Կամավորական խմբերի քանակը, դրանցում ներգրավված սովորողների, մանկավարժների թիվը և տոկոսը Կամավորական նախաձեռնության շրջանակներում համայնքի ծերերին ցուցաբերված աջակցությունների նկարագրությունը Համայնքի կարիքների բավարարմանը մտահոգ աշակերտական կազմի առկայություն
Մասնակցել լիազոր մարմնի կողմից կազմակերպված միջոցառումներին, ժողովներին, բարձրացնել դպրոցական նոր շենքի կառուցման անհրաժեշտության վերաբերյալ հարցը	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, նիստեր, քննարկումներ, ժողովներ, գրություններ, դիմումներ, ՏՀՏ միջոցներ, տնօրենի մարդկային ռեսուրս	Լիազոր մարմնի կողմից հրավիրված ժողովներին տնօրենի մասնակցության թիվը և տոկոսն ուստարվա ընթացքում Դպրոցական նոր շենքի ընդգրկումը պետական

			ծրագրերում, այդ ուղղությամբ իրականացված քայլերը
Սերտացնել ծնողական համայնք հետ շփումները, ավելացնել հանդիպումները, ապահովել երեխաների ուսման ընթացքի վերաբերյալ բավարար տեղեկատվության փոխանցումը, մեծացնել նրանց մասնակցությունն արտադպրոցական ուսուցման կազմակերպման աշխատանքներին	Յուրաքանչյուր ուսումնական տարի, 2025-2030թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում, հանդիպումներ, քննարկումներ, հաշվետվություններ, էլեկտրոնային մատյաններ, արտադպրոցական միջոցառումների համար անհրաժեշտ պարագաներ, տնօրենի, դասղեկների, ծնողների մարդկային ռեսուրսներ	Դպրոց-ծնողական համայնք սերտ համագործա-կցության առկայությունը Ծնողական համայնքի հետ տնօրենության կողմից կազմակերպված հանդիպումների թիվն ուստարվա ընթացքում, մասնակից ծնողների թիվը և տոկոսը Արտադպրոցական միջոցառումներում ներգրավված ծնողների թիվը և տոկոսը Երեխաների ուսման ընթացքին ամենաօրյա ռեժիմով հետևող ծնողների թիվը և տոկոսը

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Համայնքային միջոցառումներին սովորողների մասնակցության պասիվություն	Համայնքի հետ համատեղ քննարկել միջոցառումների ծրագրերը, իրականացնել միջոցառումների պլանավորում՝ հաշվի առնելով նաև սովորողների նախասիրությունները, ցանկությունները, ապահովել սովորողների

	նախասիրություններին համապատասխան միջոցառումների անցկացում
Սոցիալական աջակցության ծրագրերի համար միջոցների բացակայություն	Ավելացնել սոցիալական ծրագրեր իրականացնելու հնարավորությունների շրջանակը՝ բանակցելով հասարակական, բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների հետ, օգտագործել նրանց հնարավորություններ
Դպրոցի շենքային պայմանների անբավարար վիճակ, համայնքի համար միջոցառումների կազմակերպման պայմանների բացակայություն	Դպրոցական նոր շենքի կառուցման հարցը պետական ծրագրերում ներառելու ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացում
Համայնքի կողմից դպրոցական խնդիրներից ոչ բավարար տեղեկացվածություն, նմանապես համայնքային խնդիրներին ոչ բավարար չափով իրազեկվածություն	Մշտապես կազմակերպել հանդիպումներ, իրազեկման միջոցառումներ, բարձրացնել առկա հարցերը, խնդիրները, ապահովել համայնքային խնդիրներին սովորողների բավարար չափով իրազեկվածությունը
Ծնողական համայնքի նախաձեռնողական պակաս, ոչ բավարար ուշադրություն երեխաների ուսման ընթացքին	Ծնողներին իրենց երեխաների ուսման արդյունքների վերաբերյալ տարբեր մեթոդներով իրազեկում, ծնողական ժողովների ավելացում, առցանց կապի միջոցներով քննարկում, ծնողական համայնքին դեպի դպրոց կողմնորոշում